

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլ.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ.

Մի անձն, 25 տարեկան, վճարելով կառավարութեան հսկողութեան տակ գտնվող կենտրոնի ապահովագրութեան **ԷԿՍԻՏԵՆԸ** ընկերութեանը տարեկան 20 ռուբլի, ապահովացնում է ընտանիքը, իր մահից հետո, ընկերութեանը անմիջապէս ստացվելի 1000 ռուբլիով: Իսկ եթէ այդ անձը կը հասնէ 45 տարեկան հասակին, այն ժամանակ ընկերութեան մէջ նրա մոտցած բոլոր փողերը, աւելորդով անձամբ իրան են վերագրվում: Բոլոր մանրամասն տեղեկութիւնները կարելի է ստանալ ընկերութիւն ագէնտի, Ա. Վ. Մէլիք-Միլանսեանցի մօտ, Թիֆլիսում, Կառավարական Բանկի տանը, Գլխորդօվայա փողոցում, № 119.

№ 108 1—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայր արդեւորութեան ծաղկանքը. Նամակ Ալեքսանդրովիչ. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր. — ԱՐՏՈՒՄԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Խաչատրի Կարապետեան. Հայոց դպրոցները Պարսկաստանում. Եգիպտոսի առաջնապետական նշանակութիւնը. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. — ՀՆԻՄԱՆԻՆԵՐ. — ԲՈՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱՎԱՆ. Հայերը Աւստրո-Ունգարիայում.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԻ ԱՐԴԻՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԾԱՂԱԶՈՐՈՒՄ

Առատ կամ անձրեւային տարիներում ծաղկաձորի գաւառակի վարեհանգրդը արդեւորութեան են 3—5—7-ով աւելի և այդ ան պատճառով, որ նորն այդ վարեհանգրդը բաժանվում են 3 տեսակ յատկութիւն ունեցող հողերի:—Կան հողեր, որոնք նոր հերկած (հողերից շատերը գոլթանով հերկվում են 3 տարին մի անգամ), պարտադրած լինելով՝ կոչվում են «ցեկեր»: Երանք ամենատարեւոր հողերն են: Երկրորդ տեսակի հողերն են նրանք, որոնք հերկվելուց յետոյ մի անգամ ցանկվում այլ ևս գոլթանով չեն հերկվում կրկին անգամ ցանկվել, այլ ցանկվում են «չորոցով» վարելով միայն: Այդպիսի հողաբաժինը, որը կոչվում է «բերքավեր», քիչ հողած լինելով՝ միշտ արդեւոր է ունենում: Իսկ երրորդ, այն է ցածր տեսակի վարեհանգրդն են այն անպարարտ արտերը, որոնք գոլթանով հերկվելուց յետոյ՝ 3 տարի շարունակ ցանկվելով բոլորովին հողած և մնացած են լի:

ԲԱՆԱՍԻՐԱՎԱՆ

ՀԱՅԵՐԸ ԱՐՏՈՒՄԻՆԱՐՈՒՄ

Ա.
Լեհաստանում
Բ.

Լեհերը հայկաթովի եպիսկոպոսական թեմը բացի իր եկեղեցիներից, մատուռներից և այլ եկեղեցապատկան հաստատութիւններից, ունի 3 կարեւոր հիմնարկութիւններ, որոնք ի սկզբան, իրանց հիմնվելու ժամանակ՝ անշուշտ շատ օգտակար են եղած տեղացի հայերին, բայց այժմ դժբախտաբար արդէն եթէ ոչ բոլորովին, զոնէ մեծ մասով կորցրել են իրանց ազգային նպատակը և պահում են միայն հայ անունն ու յիշատակը: Այս հիմնարկութիւններից զվարդն է 1) «Լեհերը հայ կուսանոցը», որ հիմնված է արք. եպիսկոպոսարանին կից և նպատակ ունի արջկանգն զատարարականութեամբ դրաղել: Այս կանոնքի միջոցաւ ընդունվում է առած՝ նախ կամ մէկիցում և ապա այնտեղից է փոխադրված Լեհերը Ալեքսանդր Բ. պապը 1690-ին այդ կուսանոցին Բենդիկտեան կարգի կանոններն էր տուել: Կուսանոցն իր հաստատման ժամանակից սկսած՝ սկսում է մի կանոնաւոր օրերը բաց վարձարան միջին կարգի դասընթացով: Այս ուսումնարանը զուր ևս այսօր Լեհերներում շատ յարգով

նում, և հետագայ երրորդ տարին, այն է վերջին անգամ ցանկվել՝ շատ սակաւ հացահատիկ են արդեւորութեամբ: Այդ տեսակի հողատեղը անուանվում է «սոլվեր» կամ «մնացած խոզան»:

Յեւեր անուանված վարեհանգրդը առատ տարիներում արդեւորութեամբ են 7-ով աւելի հացահատիկ: Օրինակ, եթէ մի խաղվար (30 պուդ) ցորեն ցանած լինէր մի պարարտ արտում, արդեւոր կունենար 7 խաղվար (30×7=210 պուդ): Միւս տեսակի հողերը, այն է «բերքավեր» տեղերը արդեւորութեամբ են 5-ով աւելի. իսկ երրորդ տեսակի հողերը, այսինքն «խոզաններ» կամ «սոլվեր» կոչված վարեհանգրդը արդեւոր են ունենում եւսագատիկ միայն, այսինքն մի պուդ սերմնաքանակից ստացվում է 3 պուդ հացահատիկ միայն:

Այս տարի հայի բերքը շատ սակաւ է ծաղկաձորի չրջանում: Նոյն օրակար հողը (ցեղ), որը աւելի քան 80 խորանոց սաժին տեղ է բուսում և որը 10 պուդ ցորեն սերմ է վերցնում, այս տարի արտադրել 2 սալ հացարդայ միայն, որից արդեւորութեամբ 20 պուդի չափ հացահատիկ (խրաբանչիւր սալից 8—10 պուդ): Այդ դեռ ամենապարարտ, ցեղի կոչված հողերն էին, իսկ երրորդ տեսակի արդեւորութեամբ սերմն քանակութեան չափ, այսինքն ցանած 10 պուդ ցորենից ստացվեց զարձակ 10 պուդ. բայց «խոզան» անուանված վարեհանգրդից, որոնք անպարարտ, հողած տեղերն են, ստացվեց սերմն կէս մասը միայն...

Արդեւոր այդ տոկոսը պարզ կերպով ցոյց է տալիս, որ այս տարվայ հայի բերքը 5-ով պակաս է ուրիշ տարիների արդեւորից:

Է ընդունված և քաղաքի մէջ առաջինն է համարվում: Այնտեղ ուսանում են այժմ 250 աշակերտներ: Բայց արանք բոլորն էլ հայեր չեն, այլ ստուար մեծամասնութեամբ օտարալեզ են: Մինչև անգամ հայերն են ուսումն, որ երբեմն պարտաւորվել է եղել այնտեղ, այժմ հայ աղջկանց, կամ աւելի ճիշդը՝ հայերն սովորել ուղղորդել սակաւութեան պատճառով, ուսման ծրագրից էլ վերցվել է, և հայ աշակերտուհիք միայն իրանց տանն են լուծում հայ խօսքը, այն էլ շատ քիչերը: Կուսանոցի արքանոսին 80 տարեկան մի պատուարտ պառնի պառն է, Կայետանու Սարգիս օվկի, որ ընտրված է 1845-ին, ուրեմն արդէն 47 տարի է որ վարում է այս պաշտօնը: Յարգելի արքանոսին շատ լաւ խօսում է հայերէն, տեղական բարբառով: Իրանից գտտ կուսանոցի մէջ կան 18 կոյսեր, որոնք մեծ մասամբ վարժուհու պաշտօն են վարում վարժարանում: Գլխացից էլ գուցէ ունիք գիտնան հայերէն քանի մի բառ, բայց այս նորերն ընդհանրապէս կորցրած են իրանց մայրենի լեզուն:

Կուսանոցն ունի իր կրօնաւորները, որոնք նոյնպէս հայ քահանաներ են: Գլխաւորն, և միւսն ապա իր խոստովանապար, Տէր-Յովն. Սիմօն օվկի չն է, անգամ Լեհերը հայոց կոնստանտինով:

2) Թորոսեան հիմնարկութիւն: Այս ընտիր հիմնարկութեան վրա Հանդէս Առաւորայի իր 1890 յուլիսի համարում ընդարձակ և

Յայտնի է. որ ծաղկաձորի բաժնի բոլոր գիւղերի վարեհանգրդը անձրոյն են, և այդ պատճառով երաշտութեան տարիներում անընական է առատ արդարութիւն յուսալ: Այնու ամենայնիւ այս տարվայ հայի բերքը, զիւղացիների կարծիքով և ի կնից ի չաժ մանաւանջ պէտք է համարել, նրա համար, որ ամբողջ չորս ամիս այդ չրջանի հայի արտերը անձրեւի երես չեն տեսել, որոնք կարող էին առանց մի կաթիլ ջրի չորանալ, ինչպէս չորացան շատ ու շատ արտեր... Բայց և այնպէս զիւղացիների կարծիքը փարատելու, այն է այս տարվայ հայի բերքը երկնաւոր մանաւանջի տեղ չընդունելու համար՝ կասենք, որ այս տարվայ ամուլ հողին բուսականութիւն տալը այն անձրեւներն էին, որոնք անդադար տեղացին սոյն թիւ ապրել ամսի ամբողջ ընթացքում: Այս, այդ անձրեւներն էին, որոնք ծծվելով պարարտ սեւահողում՝ պարբերաբար պահպանեցին հայի արտաւոր տաք քամիները, չորեքից և սոսկակի երաշտից... Այդ մի կողմից. միւս կողմից էլ այդ հանգամանքում բուսականութեանը նպաստում է նաեւ այդ չրջանի կլիման: Փորձերը ցոյց են տալիս, որ այն արտերը, որոնք ընկած են բարձր լեռների ու բլուրների ծեղկերում, բաւարար արդեւոր ունեցան և բուսականութեամբ բարձր էին քան միւս արտերը, որոնք տարածվում են սարերից հեռու, տափարակ տեղերում: Վերջին տեսակի արտերը անտանկի չորեքից համ կարճ բոյս էին արտադրել, համ էլ նոսր, և այդպիսի արտերից, իւրաքանչիւր չորս «չաւն» տարածութիւն ունեցող տեղից (աւելի քան 80 քառակուսի սաժին), ստացվեց մի սալ հացարդայ միայն, այն ինչ նախորդ տարիներում՝ նոյն այդ մի «չաւն» տեղից ստացվում է եղել 6—7 սալ հացարդայ:

Գ. Ս.

ՆԱՄԱԿ ԱՆԻՔՍԱՆԻՐՈՒՄ

Սեպտեմբերի 14-ին
Երէկ, սեպտեմբերի 13-ին, քաղաքիս հայոց ս. Փրկչի դպրոցի դահլիճում ժողով կար: Ժողովին նախագահում էր քաղաքիս պ. ղեկավարաւոր. Ժողովում էին քաղաքիս բոլոր իրաւասունները: Ժողովը պէտք է արժանանար մի քանի կարեւոր և անհրաժեշտ հարցեր, որպիսի են. 1) ինչպէս

շատ ճիշդ ծանօթութիւններ է ստացած:
Հանգուցեալ բժշկապետ Թորոսեան, Լեհերը պիտի հայ վաճառականի որդին, վախճանվելով իր ամբողջ կարողութիւնը՝ դեռ ևս կենդանութեան ժամանակ յատկաբար է մի վարժարան հիմնելու: Գալիցիայի հայկաթովի աղքատ տղայոց համար: Այս դպրոցն, որ դեռ ևս շատ լաւ շարունակվում է, այժմ ունի 124,000 գուլդէն դրամագում: Վարժարանի մէջ ուսանում են այժմ սոյն բարերարի ծախսով 45 հայ աշակերտ և 1 հայ ուսանող էլ՝ նոյն վարժարանի ընթացաւարտ, բարձրագոյն ուսում է առնում համալսարանում: Բայց յիշեալ դրամագումից, դպրոցի բնակարանը նոյնպէս այս հիմնարկութեան է պատկանում:

Հիմնադրի բաղձնապահ համաձայն. տ. Կայետանու Վայկետան օվկի հայ կանոնիկոսը վարում է վարժարանի տեսչութիւնը և մեծ հոգատար է այս ընտիր հաստատութեան առաջադիւմութեան: «Թորոսեան հիմնարկութիւնը» գտնվում է յառեկ հողաբարձութեան հսկողութեան տակ, որոնց հինգը նշանակված են հանգուցեալ բժշկապետի կողմից համաձայն և վերջերքը Լեհերը քաղաքային խորհրդից: Այժման հողաբարձութեան են. Տէր-Յովն. Վ. Չալովիսկի, և պ. պ. Անտոնիլի, Թորոսիլի, Չալովիսկի, և Գրիստափօլի, իսկ քաղաքային խորհրդարանի կողմից՝ իր անդամները պ. Յովն. Արքաւորի: Հողաբարձութեան անդամներն ևս բոլորն էլ հայեր են: Հիմնարկու-

պէտք է ընդունել Կովկասի կառավարապետ գեներալ-ադիւտանտ Շերմիտեկին. 2) Ախուրեանի ջրանցքի խնդիրը. 3) Արհեստագիտական կամ բնական դպրոցի հարցը և 4) Քաղաքի յաջորդ. Սաթեմեանի տեղափոխութիւնը: Երկար վիճարանութիւնից յետոյ ժողովը վճռեց. 1) Կովկասեան կառավարապետ գեներալ-ադիւտանտ Շերմիտեկին ընդունել հանդիսաւոր և վայելուչ կերպով: 2) Քաղաքի կողմից խնդրել պարսկ կառավարապետից Ախուրեանի ջրանցքի մասին թոյլատուութիւն, և 3) խնդրել քաղաքի համար մի որ և է միջնակարգ դպրոցի իրաւունք:

Յայտնի է, որ մեր քաղաքի մօտ է պատմական Ախուրեան գետը, որ թիւրքաց լեզուով «Արիաչայ» է կոչվում: Այդ գետը, չը նայելով իր բարձր և յարմարաւոր դիրքին, որ շատ աջով կերպով կարող էր ջրել մեր Շիրակի ցամաք դաշտերը, այնու ամենայնիւ մինչև այսօր անցնում էր անօգուտ, հոսում է բոլորովին ի գուր, առանց որ և իցէ օգուտի, պտտեցնելով միայն մի քանի մասնաւոր մարդկանց ջրաղացաբարերը, մինչդեռ արեւմտեան և արեւելեան Շիրակում 187 դիւղ հողերը վարում են առանց ջրի...

Ախուրեանից ջուր բերելու և ջրանցք չինելու միտքը մեր հասարակութեան համար նոր միտք չէ: Դեռ 1864 թ. այս միտքը կար արեւելեան շիրակեցիների մէջ, սակայն դրամական սղութեան պատճառով մնաց անիրագործելի: 1876 թ.ին գեղացիք պատրաստեցան մի խնդիր ներկայացնել Կովկասի նախկին փոխարքայ Մեծ իշխան Միքայէլ Նիկողայիւիլին, բայց այդ անգամ էլ վրա հասաւ 1877 թ. ռուս-թիւրքական պատերազմը: Նրանից յետոյ այդ հարցը կրկին յաւուրեցվեց թէ մասնաւոր չըջաններում, թէ լրագրութեան մէջ (տես «Մշակ» 1883 թ. № 78, 79, 80.):

Սակայն մինչև այժմ էլ այդ հարցը մնացել է անիրագործելի: Գործին ծանօթ ինժեներների կարծիքով՝ Ախուրեանը շատ հեշտ կերպով կարող է բարձրանալ դէպի արեւելեան Շիրակի դաշտերը: Պէտք է Շիրակապէս գիւղի վերեւից գետի ընթացքը փոխել. դրա համար հարկաւոր է մի թիւումը կառուցանել. այնուհետեւ իլլի գիւղի մօտ մի ձոր կայ, այնտեղ հարկաւոր է կամուրջ, որ գետը կամուրջի վրայից անցնի. ուրիշ մեծ դժուարութիւններ չը կան. ծախս կը գնայ մօտաւորապէս

թիւն, հիմնադրի, հողաբարձութիւն, աշակերտներ՝ բոլորն էլ հայ, բայց դժբախտաբար հայերէն լեզու գրելի չկայ, որ շատ ցատակ է: Մայրենի լեզուն լեհերէն է դարձած:

Բժշկ. Թորոսեանց իր հիմնարկութիւնը հաստատուելուց (1865) յետոյ 1 տարի միայն ապրած է: Բայց իր յիշատակն միշտ մեծ գովութեամբ է յիշվում և լեհահայերի չքաւոր մասնակ սերունդը մեծապէս պարտական է նրան:

3) Հայկալեան դրամատուհն: Լեհերը, հին ժամանակները, տեղական հարուստ հայերի նուիրատուութեամբ մի դրամատուհն է հիմնված, այն նպատակով, որ աղքատ հայերը, երբ ստակի կարօտութիւն ունենան, փոխանակ վաշխաւորութեան դիմելու, կարողանան դրամական ամսականից փող վերցնել շատ նշան տարեկան տոկոսով. իբրեւ գրաւական ընդունվում է զգեստեղէն, դարձիւ, առականներ, կահ կարասիք և այլն: Տոկոս վերցվում է միայն 20/0: Ամբողջ քաղաքում մեծ յարգ ունի, իբրեւ պատւաւոր, հաստատուն և ժողովրդական հաստատութիւն: Բայց այժմ արդէն հեռացած է իր սկզբնական նպատակից և հայերի հետ համահաւասար օգտվում են քաղաքի բոլոր կարօտեալները, լեհ, հրէայ և այլն, առանց ազգի և կրօնի խտրութեան: Դրամատուհն դրամագումը է այժմ 300,000 ֆիւրի: Տարեկան զուտ մուտքը բաժանվում է թեմի հայ եկեղեցիների մէջ:

Դրամատուհնը գտնվում է մի յատուկ ինստիտու-

100,000 ռուբլի, որը՝ նայելով դործի օգտակարությանը՝ ոչինչ է, և երեք տարվա մէջ կարելի է ստանալ Հարկեր հազար ռուբլի մի մարդու համար մեծ բան է, սակայն մեր մէջ շատ հանգիստ կարելի է գտնել 100 մարդ, որոնք կարող լինեն 1000-ական ռ. տալ և ընկերութեամբ դործը գլուխ բերել: Ի հարկէ, կառավարութեան անհաշիւ ցուցմանը այս դէպքում անհրաժեշտ է, և յոյսով ենք, որ կառավարութիւնը կօշոյէ այս հանրօգուտ դործը առաջ տանելու: Եթէ պ. կառավարչապետը կարողութեան կը տայ այս խելացի մտադրութեանը և կը միջնորդէ բարձրագոյն կառավարութեան, մեծ բարութիւն արած կը լինի, և կազմած 100,000 ազգաբնակչութիւնը աղքատութիւնից:

Գալով ժողովի ընթացքին, պէտք է ասենք. միջնակարգ դպրոցի մասին մենք արդէն քանի քանի անգամ գրել ենք, և կրկնում ենք, որ մեզ պէտք է Արհեստագիտական դպրոց. իսկ հ. Սաթեմանի տեղափոխութիւնը ս. սինօն է վճել, և այդ իրաւաստների դործ չէ, ինչպէս շատ իրաւացի նկատեցին ժողովում:

Շիրակցի

ՆԱՄԱԿ ԽՄԱՐԳԻՆ

Թիֆլիս, սեպտեմբերի 22-ին

Շատ ցաւում եմ, որ հարկադրված եմ հրապարակ հանել հայոց դպրոցական ղեկավարների դործունէութիւնի մի վարմունք:

Արմաւիրի հայոց դպրոցի վարչութեան կողմից՝ Գեորգ քահանայ Սեֆերեան, որ մի և նոյն ժամանակ դպրոցի աւագ-ուսուցիչն է, դիմել էր ինձ, խնդրելով և աղերսելով, որ ես ուղարկեմ դպրոցի համար մի ուսուցիչ և մի վարժուհի, կամ ուղղակի երկու վարժուհի:

Ձեր անձնակերպութեան հետ անձամբ ծանօթ չը լինելով հանդերձ, գրում է ի միջի այլոց այդ քահանայ, դիմում եմ Ձեզ և յոյսով եմ, որ առանց դժուարութեան կը կատարեք խնդրքս: Խոնարհաբար խնդրում եմ՝ ձեր չընկնից այդ և կին, կամ ընդ երկուսը մի ուսուցիչ և մի վարժուհի գտնեք Արմաւիրի դպրոցի համար: Դարձեալ կրկնում եմ՝ յոյսով եմ որ չէք մերժել խնդրքս և կը նպաստեք մեզ: Այդ նամակը գրված է օգոստոսի 10-ից:

Ցանկալով մի փոքրիկ օգնութիւն մատուցանել այդ հեռաւոր դպրոցին, ես յայտնեցի իմ ծանօթ մի քանի ուսուցիչներին այն պայմանները, որ ինձ հաղորդված էր նոյն նամակի մէջ:

Անցնում է մի առ ժամանակ, և ես դեռ չէի գտել ուսուցիչ և վարժուհի: Եւ ահա ստանում եմ քահանայ Սեֆերեանից հետեւեալ հեռագիրը. «Есть желающих, отвѣчайте»: Պատասխանեցի. «Пока нѣтъ»: Եւ անմիջապէս տպագրեցի «Մշակի» մէջ այս յայտարարութիւնը. «Արմաւիրի հայոց օրիորդաց դպրոցի համար հարկաւոր է մի վարժապետ և վարժուհի, կամ

երկու վարժուհի: Պայմանները մասին գիտե՛ք «Մշակի» խմբագրատուն, ի. Մարտիկան: Իմ ուղարկած հեռագրի երկրորդ օրը, Շուշուց մի ուսուցիչ և վարժուհի, Բաղդասարեան ամուսիններ, որոնց ես առաջուց յայտնել էի, թէ Արմաւիր տեղ կայ, հեռագրով ինձ յայտնում են, թէ համաձայն են գնալ Արմաւիր: Իսկ ուղարկած հեռագրի երկրորդ օրը, ես նորից հեռագրում եմ քահանայ Սեֆերեանին այսպէս. «Намъ нуженъ учитель»:

Մի քանի օրից յետոյ ստանում եմ մի հեռագիր Սեֆերեանից, որով հարցնում է վարժված ուսուցիչների ազգանունը: Ես հեռագրով հարցրեցի ազգանունները, սպասելով՝ որ հեռագրին վարժապետի և վարժուհու ճանապարհ ընկնելու մասին:

Այդ միջոցին ստանում եմ Սեֆերեանից մի նոր հեռագիր, այսպիսի բովանդակութեամբ. «Надоу по двадцати рублей, получать здѣсь»: Ինչ կասկած, որ այդ հեռագրի հիման վրա, վարժապետը և վարժուհին կատարեալ իրաւունք ունենին իսկոյն ճանապարհ ընկնելու: Եւ ուսուցիչը արդէն Շուշուց եկել էր Թիֆլիս, այստեղից Արմաւիր գնալու:

Համարելով այդ ճանապարհածախար ընդ, ես հեռագրեցի Արմաւիր. «Выплатите на дорогу шестидесять рублей»: Անցնում է մօտ մի շաբաթ, և պատասխան չէ գալիս: Մտածում եմ, թէ սա ինչ անհոգութիւն է. սեպտեմբերն է և դպրոցի վարչութիւնը փոխանակ րօպէները հաշուելու, շաբաթներով կողեցնում է վարժապետների ճանապարհ ընկնելու:

Եւ ահա մի գեղեցիկ օր, երբ ուսուցիչը ճանապարհածախար էր սպասում, և ես մերժում էի բոլոր ինձ դիմողներին, ասելով որ արդէն վարժված են Բաղդասարեանները, ստանում եմ մի այսպիսի հեռագիր՝ այդ նոյն Սեֆերեանից. «Нужна только учительница»: Հեշտ է երեւակայել իմ վրդովմունքը, և ուսուցչի յուսահատութիւնը: Հայոց դպրոցների ղեկավարները ամեն բան սպասում էի, բայց այդպիսի բան, երբեք:

Անմիջապէս դադարեցրի իմ յարաբերութիւնը Արմաւիրի դպրոցի հետ, անպատասխան թողեցի վերջին հեռագիրը, և սկսեցի հոգալ Բաղդասարեանների համար մի նոր տեղ որոնելու (որը և գտնվեց) կարս):

Շատերը, որոնք լսել էին Արմաւիրի դպրոցի այս վարմունքը և յիշեալ քահանայի անտակտ արարքը, ասում էին, թէ պէտք է հրապարակ հանել այդ բոլոր եղելութիւնը, որպէս մի նոր փաստ՝ հայոց դպրոցների ղեկավարների անփութութեան:

«Չարժէ» պատասխանեցի ես և թողեցի: Սակայն՝ այլ առակ լուարուք: Այդ նոյն դպրոցի վարչութիւնը, կամ այդ նոյն քահանայ Սեֆերեան, փոխանակ ներդրութիւն խնդրելու իրանց արածի համար, թող են աւելի իրանց մի երկ-

րորդ, և առաջինից աւելի զարմանալի վարմունք: Ահա թէ ինչ: Թիֆլիսի մի անանուն թերթում, Արմաւիրի դպրոցի վարչութեան կողմից մի տէրտէր, Գաբրիել քահանայ Թուէլեան, առաջ բերելով «Մշակի» մէջ տպագրած իմ յայտարարութիւնը, յայտնում է ի գիտութիւն բոլոր վարժապետների և վարժուհիների, որ ոչ Արմաւիրի դպրոցների վարչութեանը և ոչ վիճակային հոգաւոր իշխանութեան ոչինչ յայտնի չէ այդ յայտարարութեան մասին և այլն և այլն... Ուրիշ խօսքերով մի կատարեալ սկսանք:

Թողնեք մի րօպէ այդ իրողութեան այն կողմը, որ շուշուի մէջ իմ անձը: Նայե՛ք դրա վրա դպրոցի տեսակէտից: Ասեցէք, ինչպէս, դպրոցի ղեկավարը մի վարժուհի է, մի քանի անձնակցներից կազմված, կ'օրէ և գիտէ հիմնարկութիւն է, որ կրում է հոգաբարձութիւն փառաւոր անունը, թէ այս կամ այն քահանայի, կամ հոգեւորականի կապով: Այդ ինչպէս է պատահում, որ երբ աւագ-ուսուցիչը, կամ ուրիշ խօսքով, կաթողիկոսի կոնգրակով՝ ուսումնարանի դպրոցական մասի պատասխանատու անձը դիմում է ուսուցիչ հրաւիրելու, հոգաբարձութեան մի ուրիշ անդամը, մի այլ քահանայ, իրան թող է տալիս հրապարակով յայտնելու, թէ այդ մասին՝ վարչութեան ոչինչ յայտնի չէ:

Պարզ երեւում է, որ Արմաւիրի դպրոցում չը կայ վարչութիւն, այլ կան ահապին կապիւղներով խաներ, որոնք անում են, ինչ իրանց զեֆն է տալիս, հոգաբարձու քահանայ՝ աւագ-ուսուցիչ չէ ճանաչում, և ոչ էլ աւագ-ուսուցիչը վարչութեան հետ կապ ունի: Կամ ուրիշ խօսքերով՝ դպրոցի ղեկավարները, միմեանց հետ հաշտ չեն: Այժմ մի ուրիշ խնդիր՝ Գեորգ թէ, թեմական առաջնորդը ոչինչ չէ անում և ոչինչ չէ խաբար չէ, և այդ պատճառով՝ դպրոցի վարչութեան անդամները իրար մէջ խռով են, իրար չեն ճանաչում, սակայն միմեջ այդ իրաւունք է տալիս մի հոգաբարձու, կամ մի աւագ-ուսուցչի՝ իրանց այդ տեսակ արարքը փաթեթելու ուրիշ չլինելու, թող տալով իրանց այնպիսի վարմունքներ, որ ես վերսկսեցի գրել, համար, աղերսել թէ ուսուցիչ դո՛ւք մեզ համար, ապա երբ ուսուցիչը գտնում են, հրաժարվել ուսուցչին ընդունելու, և վերջում էլ՝ վերկենալ և ասել, թէ մենք իսկ չենք էլ դիմել և իսկ չենք էլ խնդրել...

Ձէ որ ես իրաւունք ունեի, իմ ձեռքում եղած դուռնիքների նամակի և հեռագրի միջոցով համար՝ ուսուցիչներին ճանապարհ դնել, պահանջելով նրանց ճանապարհածախար և նոյն իսկ ուժիկը: Խ. Մարտիկան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՆԵՐ

Ստացանք Պատկանեանի ընտանիքի օգտին կազմուած Թ. Գեորգեղեանից 5 ռուբլի և Զաւալ-օղեղի Ս. Տէր-Գրիգորեանից 5 ռուբլի: Նախկին 1291 թ. 25 կ. գումարի հետ ունենք այժմ 1301 ռուբլի, 25 կօպէկ:

հոգ չէ տանում: Վերջիս, երբ նա գնացել էր Հռօմ, այնտեղ Հռօմացի տարածման ժողովի (պրօպագանդայի) գահընդ կարգիւնը հարցրել է նրան, թէ ինչու համար ինքն և իր թիւի քահանայք իրանց եկեղեցական ծիսակատարութիւնն այնպէս չեն կատարում, ինչպէս Տաճկաստանի հայ-կաթօլիկաց հոգևոր իշխանութիւնը, որ ասել է՝ բուն ազգային հայ արարողութեան համեմատ. բայց խառնափոխ առարկելով թէ այժմեան կարգն արդէն շատերին սովորական է դարձած և թէ կատարելապէս վերադառնալը դէպի հայ աղբյուրները՝ դժուարութիւններ կը ծնցնէ այժմ, այս խնդրին ոչ մի ընթացք չէ տուել իր կողմից: Սրանից արդէն կարելի է և եղարկացնել, որ Հռօմ ոչինչ չունի, եթէ Աստուծոյ հայեցին ըստ ամենայնի համաձայնին Տաճկաստանի կաթօլիկ հայոց կամ Միսիսթարեաններուն, և թէ շատ բան կախված է թեմական եպիսկոպոսից՝ բարեփոխելու համար լիահայոց այժմեան կացութիւնը:

Աստուծոյն հայ-կաթօլիկ քահանայք (ի բաց առեալ Միսիսթարեանները) բոլորն էլ իրանց արտաքին երկրորդ չեն զանազանում լատին կղերից: Նրանց բերելու ու մորուքը նոյն պէս անելու է, նրանք հազնված են լատինացի անան: Պատարալիք ժամանակ էլ նրանք զգեստաւորվում են ոչ թէ հայ եկեղեցու, այլ լատինական ձևով: Եւ այս լատինաձև, լատինազգեստ, բայց իրօք հայազգի քահանաները, կատարում են

Յայտնվում է որ Վօլգա գետի ջուրը, իր մէջ թափված նաւթի պատճառով, կատարելապէս թունաւորված է այժմ, ի մեծ վնաս գետի մէջ եղած ձկների: Նաւթով բեռնված նաւերը, որոնք երթնելում են Վօլգայով, այնքան վնաս են չինված, որ նաւթը տարիներ ընթացքում ահապին քանակութեամբ անդադար թափվում է գետի մէջ:

Ի պատասխան թեմական տեսուչ Գեղամեան քահանայի՝ մեր լրագրի անցեալ համարում տպագրած հերքման, հարկ ենք համարում յայտնել, որ ոչ թէ մեր տպած լուրն է սխալ, այլ ինքն է սխալվողը: Կոկիսի հայոց ծխական դպրոցը փակված է եղել (թէ և ոչ Գեղամեան քահանայի ձեռքով): Աւելի լաւ էր վերացնել այն պատճառները, որոնք տեղի են տուել այդ դէպքին:

Հայոց Բարեգործական ընկերութեան խորհրդի քարտուղար պ. Աւետիք եղեկեան, որը երկար տարիներ ի վեր քարեկողմութեամբ կատարում էր իր պաշտօնը, հրաժարվել է այժմ իր այդ պաշտօնից:

Ախուլքալաքի Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղը մի համակերպի միջոց է յղացել, նա վճել է գնել լատինական փողովրդական դրբեր և տարածել գաւառի հայ ազգաբնակչութեան մէջ:

Թիֆլիսի Քաղաքային վարչութեան կարգադրութեամբ, սեպտեմբերի 21-ին, ղեկնիքիցիայի ենթակիցեան Արհեստագիտական և քաղաքային դպրոցների այն աշակերտները, որոնք եկել են խաղաղով վարակված գաւառներից: Այդպէս ահա ստանում են այն է, որ այդ աշակերտները կարող են նոր վարակման պատճառ լինել:

Կիրակի օր, սեպտեմբերի 20-ին փակվեց Հաւարարում հիմնված ձրի ճաշարանը:

Տուրքմենի «Накануне» զրգի թարգմանութեան մասին «Մշակի» մէջ տպագրած նկատողութեան առիթով՝ «Տարազ» շաբաթաթերթը իրան թող է տալիս սրբաթուղթիւններ անել:

Վերսի-Ա. ՈՒՆԵՐ մեզ գրում են, որ գաւառում երեւցել են աւաղակային խմբեր, որոնք մեծ երկիւղ են գցել ժողովրդի վրա:

Ուսանող Տիգրան Աթաբեկեան խնդրում է մեզ տպագրել հետեւը. «Ի դիտութիւն Գիլիանի հասարակութեան խնդրով ձեր լրագրի էջերում դետեղեք հետեւեալը. Գիլիանում օգոստոս ամսին տուած ներկայացումից ստացված 25 ռուբլին ծախսեցի Քարաւանատար գիւղում յօդուտ խօլե-րայով վարակվածների: Գաւառական բժիշկ պ. Աղասարեանի խորհրդով՝ 10 ռ. յանձնեցի տեղական սանիտարական մասնաժողովին, մնացեալ

կալութեան ներքոյ և ունի նաև իր ներքին պաշտօնանները. խնամակալութեան նախագահն է թեմական հայ արքեպիսկոպոսը. երեք անդամներից մէկը եկեղեցական է և 2-ը աշխարհական: Գերեզ տօրը, ընդհը, հաշապահներից մէկը եկեղեցականներ են, իսկ զարմալարը, զանձապարը, և գլխաւոր հաշապահը աշխարհականներ են: Այժմ դերեկտօրն է տ. Յովհ. Մարտիրոսովի, և դործավարը ազնական պ. Գրիգոր Սիմեոնովի:

Աւստրո-Ունգարիայում թեմական առաջնորդ եպիսկոպոսները նշանակվում են ուղղակի Աստուրիայի կայսրի կողմից, առանց կղերի կամ ժողովրդական մասնակցութեան. բացառութիւն է է կազմում միայն Լեմբերգի թեմի հայ-կաթօլիկ եպիսկոպոսը: Ըստ նախկին իրաւանց, երբ Լեմբերգի աթոռն աջրի ան ու մ է, այսինքն երբ եպիսկոպոսը վարձանակում է, հաւաքվում է ամբողջ թեմի հայ-կաթօլիկ կղերն և ընտրում է իր միջից մէկին՝ եպիսկոպոսական պաշտօնի համար և նոյնը առաջարկում է կառավարութեան հաստատութեան, որ իրագործվում է միշտ անպայապէս: Վտարվածը դիմում է Հռօմ, այնտեղ օծվում է արքեպիսկոպոս Լեմբերգի հայ-կաթօլիկների թեմի համար: *) Այս թեմի՝ իր փոքրաթիւ ժողովրդով (5000 հոգի) այսպէս անկեղծ և առանձին գոյութիւն ունենալը, հայ ծխի անվրէպ շարունակելը և քանի մի արտօնութիւններ:

*) Հայ արքեպիսկոպոսը ի պաշտօնէ լինում է նաև անդամ Վիեննայի ծերակայութի:

ունենալը, Աւստրիայում շատերի համար՝ մանաւանդ լատին կղերի համար զարմանք է դարձած. և արանք նոյն իսկ անօգուտ են գտնում նրա շարունակութիւնը. բայց կայսերական կառավարութիւնը ընդհանրապէս միշտ հիմալ միշտ պաշտպանութիւն է յայտնած հայ-կաթօլիկաց: Քաթօլիկները դարձեալ հայից է գալիս: Քանի մի տարի առաջ մի հայ-կաթօլիկ թողնելով իր ազգային ծովը, յարում է բողոքովին լատինականութեան և արքեպիսկոպոս համար իր վարմունքը, մի գրեցի է հրատարակել, որով աշխատել է ցոյց տալ թէ կաթօլիկ Աւստրիայում առանձնապէս հայ-կաթօլիկ թեմի գոյութիւնը՝ իբր թէ ոչինչ raison d'être չունի և թէ հետեւաբար հարկաւոր էր բողոքովին վերացնել և միացնել լատին թեմերի հետ: Բայց այս գրեցիլ հակառակ՝ հայ-կաթօլիկ եպիսկոպոսը մի առանձին բողոքով հրատարակելով՝ գովութեամբ խօսում է հայ եկեղեցու մասին, պաշտպանում է Լեմբերգի հայ թեմի ի հնուց հնորված իրաւունքներն և լռեցնում է լատինացի հայ քահանային:

Լեմբերգի այժմեան հայ-կաթօլիկ առաջնորդը, արքեպիսկոպոս Խառնակովիչ մեծ համբաւ ունի ամբողջ Լեհաստանում՝ իբրև առաջին կարգի քաղաքացի: Բայց իր նախորդի, Գրիգոր Ռոմաշկան եպիսկոպոսին հակադրելով, որ հայասէր և հայերէն խոսէր էր, ինքը, գեր. Խառնակովիչ, գերազգաբար, հայերէն գրեթէ չը գիտէ և իր ժողովրդեան մէջ հայութեան կենդանացման մասին էլ ոչ մի

(Կը շարունակվի)

*) Մեր Ա. յօդուածում քահանայից թիւը սխալմամբ 49 էր դրույր բերված: 49 հոգի են ոչ թէ քահանայք միայն, այլ նաև վերոյիշեալ 3 աղբյուրի հաստատութիւնների պաշտօնականներն էլ մէջը, բոլորը միասին: Այս վերջինները նոյնպէս կախում ունեն Լեմբերգի արքեպիսկոպոսից:

15 բուրգով ուղարկելի նոյն գիւղը մի քանի անհրաժեշտ պիտուքներ՝ թէ՛, չաքար, կօնիակ և այլն չբաւար հիւանդներին բաժանելու համար։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽՕԼԵՐԱՅԻ ՊԱՏՈՒԱՍՏԵԼԸ

Այժմ, բարեբախտաբար, այլ ևս վախ չը կայ, որ քաղաքակրթ իրերն իրենց խօլերան մեծ կոտորածներ անի։ Գիտութիւնը թափանցել է վարակման գաղտնիքի մէջ։ Առաջինը պէս էլ չեն հաւատում, թէ նա օդի մէջ է, թէ նա քամի է— «դէ՛հ հաւաք», ինչպէս արաքներն անուանւում են խօլերային Դոնիկոսի Կօնի գիւղերի, վարակման պատճառները լաւ յայտնի են։ Միւս կողմից, ինչպէս կարծում են, էպիդեմիաները մնում են կորցրել են իրանց միաստակար յատկութիւնները։ Երբ յաճախ մեզ այցելելով, նրանք մեր մէջ պատուաստել են իրանց թոյնը։

Պարիզում աշխատում են չարհետական կերպով պատուաւանդ խօլերան մարդու վրա։ Պատուօրի աշակերտ խալկինի արած փորձերը մեծ յոյսեր են տալիս։ Բացի սրանից, սեպտեմբերի 5-ին, պ. Բրօշե-Սէքար յայտնել է գիտութիւնների ճեմարանին իր հեղուկի օգտակարութեան մասին։ Ընթերցողները յիշում կը լինեն, թէ մի քանի արտիք սրանից առաջ ինչ ազնուկ հանց այդ հեղուկը, ուրախութիւն մտցնելով ծերերի թաւաճած սրտերի մէջ և յոյսեր տալով նրանց, որ այդ հեղուկով կարելի կը լինի Ֆրանսիայի պէս նորից ջահելանալ և նորից վաշտել աշխարհիս բարիքները։ Իրաւ է, այդ յոյսերն ի դերն անցան, բայց այդ հեղուկն ուրիշ օգուտներ է տալիս։ Թժ՝ Լաֆօնի փորձերից երևում է, որ Բրօշե-Սէքարի հեղուկը մի քանի հիւանդութիւնների քաղցկեղի, բորբոսութեան և թոքախտի դէմ դեղ է։ Թէպէտ նա այդ հիւանդութիւններն բուժում է, սակայն առաջնապէս, բայց գոնէ նրանց զարգացման առաջնապէս արգելում է։ Իսկ այժմ Բրօշե-Սէքար հաստատում է, որ իր հեղուկը գործում է և խօլերայի դէմ։ Խօլերան նեարդային հիւանդութիւն է, որն առաջ է գալիս Կօնի բացիներէ, որ նա նեարդային հիւանդութիւն է, ցոյց են տալիս հիւանդի երեսի տեսքը, կծկւելը և այլն։ Արեւմտ ընտանի է, ասում է նա, որ նեարդային պիտուքը փոխառու մի հեղուկ աղբիւրութիւն սննդային խօլերայի վրա։ Մի առաւ բժիշկ, պ. Ուսկալսկի, այժմ գործ է ածում այդ հեղուկը խօլերայի դէմ, և Պետերբուրգի թերթերն ասում են, թէ նա առողջացնում է բոլոր հիւանդացածներին, որոնց նա բժշկում է։ Բրօշե-Սէքար բժշկական ճեմարանի ուղարկութիւնն է դարձնում այդ իրողութեան վրա։

ԵԳԻՊՏՈՍԻ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Արտասահմանեան հայոց լրագրներում կարդում ենք հետեւեալ յօդուածը։

«Անգլիական ամենէն կարևոր քաղաքական թերթերի և հանդէսների մէջ այնպիսի գրուածներ կը տեսնուին Նիլոսի գետին կարեւորութեան վրա, որ այլ ևս ներքի չէ տարակուսիլ թէ Անգլիայի պետական ու և է անձ՝ Նիլոսի թողութիւնը կրնար հանել՝ առանց իր դէմ ունենալով աղբային զգացման հոսանքը։

«Հաղորդակցութիւն Ուրբո Ուաշ և ու նշանաւոր յօդուածով՝ Նիլոսի գետին զերեւելի միջոցով համար ունեցած կարեւորութիւնը և օգուտները թուելէ ետք՝ կը սկսի ընկնել թէ նոյն իսկ այդ զիջել հիւսիսի և հարաւի կողմէն լաւ պաշտպանութեան է թէ ոչ։ Իր խօսքին հայելով, Միջերկրականի կողմէն Կիպրոս և Մալթա չեն բաւար ապահովելու համար Նիլոսի գետը, մանաւանդ երբ Ֆրանսիան թուական Պիլիքի խաւանարանը ամրացնելով, Մալթան անհամեմատ զօրւաւոր մի կայան կունենայ։ Միայն Պիլիքի չէ Անգլիայի վտանգը։ հեղինակը կարծիք ձգելով մուսլիմ քոլ Շէյխ Սալիմ կոչւած դիւքն ալ վտանգաւոր կը սեպէ, զիջել մը, զոր Ֆրանսացիները, յօդուածագրին տեղեկութեան նայելով, իրանց սեպականացնելու համար մի ժամանակէ ի վեր բանակցութեան մէջ են Թիւրքիայի հետ։

«Իր յօդուածի եզրակացութեան մէջ անգլիացի զինուորականը Սուէզի ջրանցքը երկրորդ թափող մը ներկայացնելով, կը յարէ թէ Անգլիան իր ձեռքը պէտք է ունենայ Հնդկաստանի այդ բանալին, եթէ չուզէր մեծ աղբերի մէջ իր ունեցած ներկայ դերը կորսնցնել։»

ՀԱՅՈՑ ԳՈՐԾՆԵՐԸ ՊԱՐԱԿԱՍՏԱՆՈՒՄ

«РУССКАЯ ЖИЗНЬ» լրագրում՝ Միկլաշկիսկի հաղորդում է իր գիտութիւնները թափելի հայոց զարգացման մասին, որոնց նա, Պարակաստանում իր արած ճանապարհորդութեան ժամանակ, այցելել է։ Այդ գիտութիւնները, հեղինակի ասելով, աւանդում են բացի պարսկերէն ու հայերէն լեզուներից՝ ֆրանսերէն և ռուսերէն լեզուներն է։ Միկլաշկիսկի ներկայ է գտնուել ռուսերէն լեզուի դասին և վկայում է որ աշակերտները գրեթէ անխալ են գրում ռուսերէն։ Հեղինակի կարծիքով, զարգող բարձր դաստիարակ աշակերտները կարող էին առանց դժուարութեան շարունակել իրանց ուսումը մեր լեզուական դպրոցները չորրորդ դաստիարակ մէջ։ Ռուսաց լեզուն սովորեցնում են թափելի հայոց դպրոցում «ДѢТСКІЙ МІРЪ» ձեռնարկով։ Ֆրանսիական լեզուն՝ Մարգոբի դասագրքով, թարգմանութիւնը՝ Նիկոլայեւսկու ձեռնարկով և այլն։ Առանձին ուղարկութիւն է դարձնում ռուսաց լեզուի ուսումնասիրութեան վրա, և զարգող այդ լեզուն իր սաներին աւանդելու համար նիւթական օժանդակութիւն է ստանում թափելի ռուսաց հիւանդանոցներից։ Ռուսաց պետութեան հետ իրանց ունեցած առևտրական մշտական յարաբերութիւնները։ Այդ իսկ պատճառով թափելի հայոց իզական դպրոցում ռուսաց լեզուն չէ աւանդում, քանի որ կանայք, ի հարկէ, չեն պարապում առևտրական գործերում։

ՆԱՄԱԿ ՊԱՐԱԿԱՍՏԱՆԻՑ

Թափելի, 11 սեպտեմբերի

Խօլերան իր անխիւ զոհերը տանելուց յետոյ, այժմ փոքր ինչ հանդարտվել է։ Ստակլի արևոր մի անգամ ևս ապացուցեց պարակաստանը բարոյական ուժեղութիւնը։ Ամբողջ խօլերայի ընթացքում թափելի դատարկվել էր, բնակիչները փախել էին զանազան կողմեր։ հայերը գլխաւորապէս ապաստան էին գտել մօտակայ Մոսթաբար հայաբնակ գիւղում։ 7—800 տուն հայերից՝ քան զարած մնացել էր միայն 40—50 տուն՝ ամեն միջոցներից զուրկ դատակարգել։ Առևտուրը և դաշնական յարաբերութիւնները դադարել էին։ Կենսական ամենահարկաւոր պիտուքները փաճառող խանութներն անգամ փակված լինելու պատճառով, քիչ մնաց, որ առաջինից ոչ պակաս մահաբեր աղետ, սովը երևան դարձ։ Ամեն տեղ տիրում էր լաց ու կոծ, ամեն սրտից շարունակ էր կաթում, ինչպէս ասում է ժողովուրդը։ Խեղճ, անտէր և անօգնական մնացածները ստիպված անձնատուր էին եղել ճակատագրական անշարժութեան, բոլոր երկրային միջոցներից զուրկ լինելով՝ նրանք իրանց յոյսը դրել էին Աստուծոյ վրա։ Ամենամոտոց պաշտօնական տեղեկութիւնների բացակայութեան շնորհով, դժուար է դրականապէս ասել, թէ որքան է զոհերի թիւը, միայն ուրիշների ասելով՝ թափելիում պարսկերէնից մեռել են մօտ 10,000 հոգի, իսկ հայերից 110 հոգի։

Այն ինչ թափելի հարուստ դասակարգը, փրկված և ուսած աղաները, կենքի բոլոր հեղուկներն իրենց շրջապատում՝ գիւղերում և ամառանոցներում ընկղմված ասիական հեղուկի ճեփերի մէջ, մտապէս էին իրանց մարդկային և ընկերական պարտաւորութիւնները, այդ ժամանակ թափելիում աղքատ, չունեցող դատակարգի գործունէութիւնը մի կատարեալ հասկացութիւն էր ներկայացնում։ Ամենից արհամարիւմ, աչքից ընկած խեղճ դատակարգը հերոսական եռանդ և ընկերակիցներին օգնելու ջիւղ՝ գործունէութիւն էր ցոյց տալիս։ Նա մեռելի մարմինը պատանում էր դնում և անպիսի՝ նստի դեր կատարող սանդուղքի վրա դնելով իր ուսերի վրա հայոց թաղերից մինչև գերեզմանատունը—մօտ կէս ժամվա ճանապարհ—այդպէս ուսակրած տանում թաղում էր։ Արևի աստիկ տաքութիւնը, յորդուստ քրտնքը, յոգնածութիւնը և ամեն վտանգ յանձն առնելով՝ այդ հերոսները սրբազան պարտք էին համարում իրանց թշուառ ընկերակիցներին օգնելը։

Այսպիսի հասարակական, ընդհանուր աղետ, ների ժամանակ միայն մի ուրախակի երեւոյթ է նկատվում— այն է զանազան ժողովուրդների մէջ երևան է դալիս մի սոսակ փոխադարձ, մի-

մեանց օգնելու նպատակով եղած ջիւղ համարակցութիւն, ընդհանուր ցաւազգացութեան պատճառով առաջացած միջաւոր յարաբերութիւններ, ի հարկէ, միայն այն երկրներում և այնպիսի հասարակութեան մէջ, ուր հասարակութեան պարտաճանաչութիւնը և ընկերին օգնելու գիտակցութիւնը մեծապէս զարգացել է և ուր մամուլի աղբարարութիւնները պատգամի տեղ են ընդունելով։ Սակայն ամեն կրթողական ֆակտորներից զուրկ պարակաստանը չեն կամենում գոնէ հետեւել ռուսացիներին։ Միթէ հարուստ պարակաստան էլ չէին կարող գեթ առժամանակեայ ձրի, աղքատ ժողովրդի համար հասարակական մի քանի թէյաներ բանալ։ Փոխանակ մէկ երկու ամսում 200—300 բուրգի միակտլ՝ գիւղերում անհոգ և չուայլ ճեփերով կենաց անցկացնելու, մեր հաստափոր աղաները, իբրև մարդ, պիտի հոգային նաև խեղճ ժողովուրդի վրա, բայց ժողովուրդը, մարդասիրութիւն, խելճ և այլ, բաւերը զօշ չարքին մեր փրկած և սրտից ու զգացմունքից զուրկ հաստաղութների համար։ Այժմ էլ դեռ ուշ չէ, թող իրանց գործունէութեամբ ցոյց տան, որ մենք սխալված ենք։

Թափելիում համարեա թէ խօլերան դադարել է, բայց դաւաճելու և գիւղերում դեռ ևս շարունակում է առատօրէն հնձել։ Փախչողները վերադառնում են։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«НОВОСТИ» լրագրին վիեննայից հեռագրում են, «Յունաստան խիստ առաջադրութիւններ աւելցնել է, Դուսն» Բալկանայում յունաց զարգացման փակման առիթով։

—Պարիզից գրում են, որ բուլանիստները ուրիշ են իրանց պարագլխի՝ Բուլանիսի մահվան տարեդարձը տօնել առանց որ և է ցոյցերի։

—Արտասահմանեան հայոց լրագրներում կարդում ենք հետեւեալը. «Յայտնի է որ Թիւրքիայի կրթական նախարարը հպատակ քրիստոնէայ հասարակութիւններին վարժարանների մասին մի շրջաբերական հանած էր վերջերս, հրահանգելով ուսում որ հարկն է, չլիցիւզ որ նոր վարժարաններ բացուին առանց հրամանի և արդէն եղածների անօրէններն ալ հրաւրել՝ որ 3 ամիս պայմանաժամին մէջ արտոնութիւն ձեռք բերեն, որպէս դի չզրոյուին վարժարանները։ Արդ, կրթական այդ կարգի խառնութիւններ և հոկտոբրին կուզեն նաև Թիւրքիայի մէջ գտնված եւրոպական վարժարաններին մասին ալ գործադրել այժմ, վերջերս մի քանի այգիլի վարժարաններ այցելութեան դիտարկում են թիւրք կրթական քննիչները, և թէ է պէտք եղած մեծարանքով ընդունված են, սակայն երբ պաշտօնապէս քննութեան ձեռնարկել ուզած են, այդ իրաւունք իրանց մերժուել է։»

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԴՈՐՄԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՄՈՍԿՎԱ, 22 սեպտեմբերի։ Այսօր, լաւ եղանակին, կրկնվել սկսվել թափք՝ որին մասնակցում էր տանեակ հազար ժողովուրդ՝ ուղեկցութեամբ գնեղաշունահանապետի և իշխանութեան ներկայացուցիչներին։

ՎԻԵՆՆԱ, 22 սեպտեմբերի։ Այսօր կայարանից Թուրին, Պեշտում բացեց աւտոբիլական պատգամաւորների նստաշրջանը։ Իր ճառի մէջ, կայարանի միջի ալրաց յիշատակեց, որ դէպի բոլոր պետութիւնները յարաբերութիւնները մնացել են բոլորովին բարեկամական։ Դաշնակից պետութիւններին հետ եղած կապը պահում է և ապագայի համար իր օգտակար աղբիւրութիւնը, որը նպատակում է խաղաղութեան պահպանութեան, բոլոր աղբիւրի ունեցած պահանջը խաղաղութեան գործում և նրանց նիւթական բարեկեցութեան համար եղած հոգաւորութիւնը անխաղած հանգստացնող ներգործութիւն է անում միջազգային յարաբերութիւններին վրա։

ՄԱԴՐԻԴ, 22 սեպտեմբերի։ Ներուրները իրանց օրընի գնեղաւ ընտրեցին՝ «պանիական», եւրոպա Մարտին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 սեպտեմբերի։ «Визж. Вѣд.» լրագրից հաղորդում է, որ Պետերբուրգ ժամանեց Բերլինի բանկի վարչութեան անդամ Շէլլեր՝ բանակցութիւններ անելու ռուսական ֆինանսական

նոր օպերացիաների համար։—Ի նկատի ունենալով ս. Սերգէյ Բաղդոնիստ մահվան 500-ամեակը, ս. Սերգէյ կարգադրեց՝ սեպտեմբերի 25-ին ամեն տեղ ժամերգութիւն կատարել, արձակել պարապմունքներից հոգևոր դպրոցների և եկեղեցական ուսումնարանների աշակերտներին, և դասախօսութիւններ անել ս. Սերգէյի մասին—Ներէկ տօնվեց պրօֆեսոր Վ. Տարնովսկու գիտնական գործունէութեան երեսնամեակը, յօրեւալին ուղարկել են բաղմաթիւ չնորհաւորական հեռագիրներ և նամակներ։

ԿԱԶԱՆ, 22 սեպտեմբերի։ Այսօրից հոգևոր ճեմարանը հանդիսաւոր կերպով տօնեց 50-ամեայ յօրեւանը, հանդիսին ներկայ էին պատգամաւորներ համալսարաններից և ճեմարաններից։

ԲՈՒՍՏՈՎ (Դանի վրա), 22 սեպտեմբերի։ Ներուր օրն է, որ տեղի է ունենում Բոստովի և Նախիչևանի ու նաւատէրերի ներկայացուցիչների միացեալ ժողովը։

ՎԻԵՆՆԱ, 22 սեպտեմբերի։ Պատգամաւորների ժողովի մէջ պատգամաւորներից մինի արած հարցին, կոմս Կառնիկ պատմականց, որ գերմանացիներին հետ ունեցած դաշնագրի մէջ կայ այն բոլորը, որը կարեւոր է Աւստրիային՝ իր սեփական ապահովութեան համար, Սպանիայի հետ ունեցած դաշնագրի հրատարակելը՝ երկու կառավարութիւններին կողմից էլ անցանկալի է համարված, աւստրիական և ռուսաց արքունիքների յարաբերութիւնները անփոփոխ բարեկամական են, քաղաքական դրութեան մասին նոր և հետաքրքրական ոչինչ չը կայ հաղորդելու, անգլիական միւնիստրութեան փոփոխութիւնը ոչինչ վտանգ չէ ստալացնում, ազատաւոր կուսակցութիւնը արտաքին քաղաքականութեան մէջ կը հետեւի տօրիներին միւնիստրութեան, Եւրոպայի արեւելան և արևմտան կողմերում շարունակվում են զինաւորվել՝ մեծ շափով, բայց հասարակական կարծիքը արդէն վարժվել է այդ երեւոյթներին և դրա մէջ տեսնում է խաղաղութեան գրաւականը, բոլոր պետութիւններից և կառավարութիւններից ստացված են դրական տեղեկութիւններ՝ որ նրանցից ոչ ոք մտադիր չէ պատերազմ սկսելու։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐԱՍ

Սեպտեմբերի 22-ին

Լօճին վրա 10 ֆունտ արծէ	99	10	4
Բերլին վրա 100 մարկ —	48	60	»
Պարիզի վրա 100 ֆրանկ —	39	»	30
Ոսկի — — — — — արծէ	7	»	93
Մաքսայի կուպոններ —	158	»	75
Արծաթ — — — — —	1	»	10
Բօրսային դիսկոնտո —	4	»	5 1/2 0/0
Պետ. բանկի 5 0/0 տօմս 1 շրջանի	103	»	12
— — — — — 2-րդ —	103	»	—
— — — — — 3-րդ — — — — —	—	»	—
— — — — — 4-րդ — — — — —	—	»	—
— — — — — 5-րդ — — — — —	—	»	—
— — — — — 6-րդ — — — — —	102	»	75
6 0/0 ոսկեայ բէնտա	163	»	75
4 0/0 ոսկեայ փոխառութիւն	—	»	—
Արեւելեան 5 0/0 փոխառ. 1-ին շրջ. — — — — —	—	»	—
— — — — — 2-րդ — — — — —	102	»	50
— — — — — 3-րդ — — — — —	104	»	75
Ներքին 5 0/0 առաջին փոխառութիւն	236	»	50
— — — — — երկրորդ — — — — —	217	»	—
Պետական երկաթուղային բէնտա	103	»	75
5 1/2 բէնտա	—	»	—
4 0/0 ներքին փոխառութիւն	—	»	—
5 0/0 դրաւ. թղթ. ագն. կալ. բանկի 101	»	75	»
Ագն. կալ. Պետ. բանկի խաղաղութիւն	191	»	25
5 1/2 0/0 վկայակ. գիւղ. հող. բանկի 105	»	50	»
4 1/2 0/0 դրաւական թղթեր կալուած	—	»	—
փոխ. կրեդիտ. ընկեր. մտաւ.	154	»	—
— — — — — թղթաւ.	101	»	75
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ.	102	»	25
Մոսկովայի քաղաք. օրկապայաններ.	101	»	50
Օրկապայ. — — — — —	102	»	—
Թիֆլիսի — — — — —	98	»	—
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	99	»	85
— — — — — Բուլկայի — — — — —	99	»	85

Ս. Պետերբուրգի բօրսայի արամադրութիւնը՝ հանդարտ է։

Խաղաղը-Հրատարակող՝ ԳԻՐԻՈՐ ԱՐՄԻՈՒՆԻ

